ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

28 հունիսի 2024 թվականի թիվ 72-Ա

ք.Երևան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2023 թվականի մայիսի 12-ին ՀՀ գլխավոր դատախազության ԱԱԾ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի 05.05.2023թ. 07.1/07.4/8082-23 գրության հիման վրա հարուցված թիվ 1 վարչական վարույթի նյութերը, պարզեց.

Հանձնաժողովի կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս Հեռարձակողների գործունեության մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող) «Հայկական երկրորդ հեռուստալիք» տեսալսողական ծրագրի եթերում Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված դրույթի պահանջի խախտման փաստ:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Արգելվում է տեսալսողական հաղորդումներում օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելը: Ուղիղ եթերի ժամանակ նման կոչեր հնչելու դեպքում Հեռարձակողը պատասխանատվության չի ենթարկվում, եթե կոչի հեղինակը ուղիղ եթերում զգուշացվել է իրավախախտման մասին, իսկ կրկնակի կոչի դեպքում ուղիղ եթերը դադարեցվել է:»

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմինը օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում վարչական իրավախախտման կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով արգելված արարքի հատկանիշներ հայտնաբերելու դեպքում դիմում է իրավասու մարմիններ:

Ղեկավարվելով Օրենքի վերը նշված դրույթով՝ Հանձնաժողովը 2023 թվականի մայիսի 02-ի գրությամբ դիմել է ՀՀ գլխավոր դատախազին (գրությանը կից ներկայացնելով նաև նշված իրավախախտման վերաբերյալ տեսագրությունը) համապատասխան ընթացք տալու համար:

Ի պատասխան նշված գրության՝ 2023 թվականի մայիսի 05-ին Հանձնաժողով է հասցեագրվել ՀՀ գլխավոր դատախազության ԱԱԾ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի թիվ 07.1/07.4/8082-23 գրությունը (նշված գրությունը Հանձնաժողով է մուտքագրվել սույն թվականի մայիսի 12-ին) «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «Հայկական երկրորդ հեռուստաալիք» տեսալսողական ծրագրի 2023 թվականի ապրիլի 4-ի տեսագրությունների ուսումնասիրության վերաբերյալ և հայտնել, որ զանգվածային լրատվության միջոցներում առկա հրապարակումների նկատմամբ ՀՀ դատախազության կողմից իրականացվող մշտադիտարկման արդյունքում առանձնացվել և քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու նպատակով ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական գլխավոր վարչություն է ուղարկվել Հանձնաժողովի ուղարկած տեսագրությանը նույնաբովանդակ տեսագրություն, որի ուսումնասիրությամբ դեռևս 2023 թվականի ապրիլի 07-ի ՀՀ քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախաձեռնվել է քրեական վարույթ և նախաքննություն կատարելու նպատակով ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «**Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին**» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով, 2023 թվականի մայիսի 12-ին հարուցել է վարչական վարույթ:

Ըստ ձայնագրության՝ «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «Հայկական երկրորդ հեռուստաալիք» տեսալսողական ծրագրի 2023 թվականի ապրիլի 04-ի եթերում հնչել են հետևյալ արտահայտությունները՝

- «Միասին» շարժման հանրահավաքը՝ Արցախի ճանաչման և ՀՀ իշխանությունների հեռացման պահանջը» խորագրով հաղորդման ընթացքում Վոլոդյա Հովհաննիսյանի կողմից հնչել են հետևյալ արտահայտությունները՝

«…Պետք է այս քաղաքի ժայռերից գլխիվայր կախվեն բոլոր նիկոլական թուրքերի մարմինները….»,

«…Պետք է պայքարենք այդ դավաճան իշխանության դեմ, որը պահպանվում է թուրքական փողերով և հայի անտարբերությամբ….»,

«…Ոչնչացնենք այդ իշխանությունը….»,

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2023 թվականի մայիսի 15-ին թիվ Ե/07/247-23 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը նշված գրության և վարչական վարույթի վերաբերյալ պարզաբանումներ և բացատրություններ չի ներկայացրել:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազության ԱԱԾ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի 05.05.2023թ. 07.1/07.4/8082-23 գրությունը, 2023 թվականի մայիսի 22-ին ընդունել է «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերության նկատմամբ վարչական վարույթը կասեցնելու մասին» թիվ 49-Ա որոշումը:

2024 թվականի հունիսի 14-ին Հանձնաժողով է հասցեագրվել ՀՀ դատախազության Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանների դատախազության գրությունը (Հանձնաժողով մուտքագրվել է 2024 թվականի հունիսի 18-ին՝ թիվ ՄԳ/716-24), որով հայտնել են, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում Վոլոդյա Հովհաննիսյանի վերաբերյալ քննվող քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, և դատաքննության ընթացքում քրեական հետապնդումը դադարեցվել, և քրեական գործը կարճվել է:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Հեռարձակողը հանդիսանում է Հանձնաժողովի կողմից հեղինակազորված իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝

«Արգելվում է տեսալսողական հաղորդումներում օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելը: Ուղիղ եթերի ժամանակ նման կոչեր հնչելու դեպքում Հեռարձակողը պատասխանատվության չի ենթարկվում, եթե կոչի հեղինակը ուղիղ եթերում զգուշացվել է իրավախախտման մասին, իսկ կրկնակի կոչի դեպքում ուղիղ եթերը դադարեցվել է»:

Այսպիսով, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմինը օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում վարչական իրավախախտման կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով արգելված արարքի հատկանիշներ հայտնաբերելու դեպքում դիմել է իրավասու մարմիններ:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատաքննության ընթացքում քրեական հետապնդումը դադարեցվել և քրեական գործը կարճվել է, այսինքն՝ դատարանի կողմից չի հայտնաբերվել և փաստվել այնպիսի դեպք կամ գործողություն, որը նախատեսված է եղել բռնություն գործադրելու հրապարակային կոչով, հրապարակայնորեն արդարացրել բռնությունը, այսինքն՝ չի հայտնաբերվել և փաստվել այնպիսի դեպք կամ գործողություն, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով՝ ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ

վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով Հեռարձակողի նկատմամբ հարուցված թիվ 1 վարչական վարույթը ենթակա է կարճման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝ մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի և 282-րդ հոդվածի դրույթները և ՀՀ դատախազության Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանների դատախազության 2024 թվականի հունիսի 14-ի գրությունը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց՝***

1.«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 1 վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Կողմերին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3.Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Գ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ**

2024թ. հունիսի 28
ք.Երևան